

Հավելված 1

Կադաստրի կոմիտեի ղեկավարի

«08» 02 2022 թ.

N 32 -Ա հրամանի

## Ծ Ր Ա Գ Ի Ր

### ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

#### 1. ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Փորձագետ ներգրավելու անհրաժեշտությունը պայմանավորված է Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կադաստրային գնահատման և շուկայի վերլուծության (այսուհետ՝ Վարչություն) «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքից բխող շուկայական գնահատման վերաբերյալ տարբեր երկրների օրենսդրությունների՝ մասնավորապես գնահատման ստանդարտների, գնահատողների որակավորման անցկացման կարգերի, այլ իրավական ակտերի և աշխատանքային փաստաթղթերի թարգմանություններ կատարելու համար:

Այդ պատճառով առաջարկվում է Վարչության աշխատանքներում ներգրավել համապատասխան փորձ ունեցող մասնագետ, ով կկարողանա կատարել տարատեսակ իրավական ակտերից, աշխատանքային և այլ փաստաթղթերից մասնագիտական թարգմանություններ:

#### 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Փորձագետի ներգրավման նպատակը նրա մասնակցությունն է ՀՀ գնահատման ստանդարտների և ենթաօրենսդրական իրավական ակտերի վերջնական մշակմանը:

#### 3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

Պայմանագիրը կնքելու պահից սկսած 4 (չորս) ամիս ժամկետով:

#### 4. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

- 1) Փորձագետը չորս ամսվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքները, մասնավորապես՝
  - ա. ՀՀ գնահատման ստանդարտների և ենթաօրենսդրական իրավական ակտերի վերջնական մշակմանը մասնակցություն,

2) Կատարած աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ

Փորձագետի կողմից ներկայացվող հաշվետվությունները նախատեսվում է ներկայացնել ամսական կտրվածքով:

6. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Աշխատանքների գնահատման չափանիշներն են.

- ա. միջազգային գնահատման ստանդարտների թարգմանություն
- բ. գնահատման ոլորտին վերաբերող տարբեր երկրների իրավական ակտերի թարգմանություն
- գ. ՀՀ գնահատման ստանդարտների վերջնական մշակմանը մասնակցություն
- դ. ենթաօրենսդրական իրավական ակտերի վերջնական մշակմանը մասնակցություն:

7. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Փորձագետին ներկայացվող պահանջներն են.

- ՀՀ քաղաքացիություն,
- բարձրագույն կրթություն,
- անգլերենի գերազանց իմացություն,
- առնվազն 3 տարվա թարգմանչական փորձ,
- թիմում աշխատելու ունակություն,
- իրավական ակտերի թարգմանելու կարողություն:

8. ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՄԻՏԵՈՒՄ

Փորձագետը Կոմիտեին տրամադրվող փորձագիտական ծառայությունների շրջանակում պետք է իրականացնի հետևյալ աշխատանքները.

Բարեխղճորեն կատարել պայմանագրով ստանձնած աշխատանքները (շուկայական գնահատման վերաբերյալ տարբեր երկրների օրենսդրությունների՝ մասնավորապես գնահատման ստանդարտների, գահատողների որակավորման անցկացման կարգերի, այլ իրավական ակտերի և աշխատանքային փաստաթղթերի թարգմանություններ) պահպանել Կադաստրի կոմիտեի ներքին կարգապահական կանոնները, իրականացնել

ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և պայմանագրով իրեն վերապահված պարտականությունները: